ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԻ» ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլու հետ, եղավ Թբիլիսիի Դիդի Դիղոմիի տարածքում կառուցվող «Կրթության քաղաքի» շինհրապարակում, ծանոթացավ շինարարության ընթացքին:*

Ինչպես նշեց վարչապետը, Թբիլիսիում կրթության նոր քաղաքի շինարարությունը կավարտվի ընթացիկ աշնանը: Կառավարության ղեկավարը մանրամասն ծանոթացավ շինարարության ընթացքին եւ հայտարարեց, որ նման նախագծեր Վրաստանում պետք է իրականացվեն բոլոր քաղաքներում:




- Դեռեւս մայիսին մենք հայտարարեցինք կրթության նոր քաղաքի շինարարության մասին: Դա 13 հեկտար տարածք է, որտեղ կկառուցվի 1500 երեխայի համար նախատեսված հանրային դպրոց, այստեղ կլինեն նաեւ Կոմորովի դպրոցը, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ամենաարդի լաբորատորիաները: Նաեւ կունենանք մասնագիտական նոր ուսումնարան եւ արվեստի դպրոց: Մենք նման նախագիծ իրականացնում ենք նաեւ Բաթումիում եւ առաջիկայում նման նախագծեր կիրականացնենք նաեւ Վրաստանի բոլոր խոշոր քաղաքներում: Մեզ համար կենսական նշանակություն ունի այն, որ բոլորի համար ժամանակակից ենթակառուցվածքները լինեն մատչելի, առավել եւս նշանակալի է, երբ խոսքը վերաբերում է մեր երեխաների ապագային,- ընդգծել է Մամուկա Բախտաձեն:

Իր խոսքում, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին նշեց առաջիկա ծրագրերի մասին, որ մինչեւ 2021 թվականը Թբիլիսիի Դիղոմի թաղամասում պետք է կառուցվի նոր, եվրոպական չափանիշներին համապատասխան սպորտի պալատ: Նա հիշեցրեց, որ 2021 թվականի Եվրոբասկետի խմբային փուլը կհյուրընկալի Վրաստանը:

- 2021 թվականը շատ կարեւոր տարի է լինելու, բոլոր երկրպագուների համար մեծ իրադարձություն: Մեր երկրպագուները ռեկորդ էին սահմանել այցելությունների քանակով: Հենց դա էր պատճառը, որ Վրաստանը դարձավ հյուրընկալող երկիր: Պետք է մինչեւ 2021 թվականը հասցնենք կառուցել նոր, եվրոպական չափանիշներին համապատասխան սպորտի պալատ, որը հետագայում նույնպես հնարավորություն կտա լայնածավալ սպորտային միջոցառումներ անցկացնել,- հայտարարել է Բատիաշվիլին:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - 150

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

*Այս անգամ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի հյուրերը ժամանել էին Երեւանից: Գերմանացի պրոֆեսոր Հելմուտ Մալոնեկը եւ Հայաստանի գրողների միության անդամ, գերմանաբնակ գրող Ագապի Մկրտչյանը, «Հայարտուն» կենտրոնում ներկայացան «Հովհաննես Թումանյանի հեքիաթները» գերմաներեն ժողովածուի շնորհանդեսով եւ գրքի նկարազարդումների յուրահատուկ ցուցահանդեսով:*



Գիրքը լույս է տեսել Ավստրիայում՝ Ագապի Մկրտչյանի եւ Հելմուտ Մալոնեկի համատեղ թարգմանությամբ: Ըստ Ագապի Մկրտչյանի՝ գրքում զետեղված գերմանացի փոքրիկների, ինչպես եւ հայ մանուկների՝ հեքիաթներին համահունչ նկարները, ծնվել են սովորական նկարչության դասաժամերին՝ Թումանյանի հեքիաթների գերմաներեն ընթերցումից հետո:

Պատահական չէ մասնագիտությամբ մաթեմատիկոս Հելմուտ Մալոնեկի՝ հայ ժողովրդի ու նրա մշակույթի հանդեպ սերը: Այն ծնվել է Հելմուտի՝ Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում ուսանելու տարիներին: Դա անցյալ դարի 60-70-ական թվականներին էր. «Ես մասնակցել եմ նաեւ Հովհ.Թումանյանի եւ Կոմիտասի 100-ամյակներին նվիրված միջոցառումներին, եղել եմ Թումանյանի ծննդավայր Դսեղում»,- ասաց Հ.Մալոնեկը:

Միջոցառումը խորին շնորհակալությամբ ողջունվեց երեկոյի մասնակիցների՝ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Եվգինե Մարկոսյանի, «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանի, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի հոգեւոր տեսուչ Տեր Տաթեւ քահանա Մարուքյանի, մանրանկարիչ Մերուժան Շահումյանի եւ ուրիշների ելույթներում:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Գեւորգյան հոգեւոր ճեմարանը հայտարարում է 2019 - 2020 ուս. տարվա ընդունելություն**



Հայաստանում գործող հնագույն ԲՈՒՀ-ը` Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը (Աստվածաբանական համալսարան) հայտարարում է 2019-2020 ուս. տարվա ընդունելություն:

Գեւորգյան հոգեւոր ճեմարան կարող են ընդունվել ՀՀ եւ այլ երկրների մինչեւ 25 տարեկան արական սեռի այն քաղաքացիները, որոնք ունեն միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն, զավակ են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ ցանկություն ունեն ուսանելու այն հաստատությունում, ուր կրթվել են Կոմիտաս վարդապետը, Հրաչյա Աճառյանը, Լեւոն Շանթը, Մակար Եկմալյանը, Ակսել Բակունցը, Դերենիկ Դեմիրճյանը եւ մեր ազգի այլ մեծեր:

Դիմել կարող են նաեւ Հայաստանի զինված ուժերում ծառայությունն ավարտած, զորացրված քաղաքացիները:

***Ընդունվելու համար դիմորդները պետք է քննություններ հանձնեն հետեւյալ առարկաներից.*** *Հայոց լեզու (գրավոր), Հայ գրականություն (բանավոր), Հայոց պատմություն (բանավոր), Երաժշտություն (երգեցողություն, լսողություն, ռիթմի զգացողություն), Օտար լեզու (անգլերեն` ստուգարք):*

***Անհրաժեշտ փաստաթղթերն են.*** *դիմում ճեմարանի տեսուչի անունով (լրացվում է տեղում), ինքնակենսագրություն, միջնակարգ կամ ավելի բարձր կրթության վերաբերյալ փաստաթուղթ (ատեստատ կամ դիպլոմ), բնութագիր դպրոցի տնօրինությունից, բժշկական վավերացման տեղեկանք, անձնագրի պատճեն, երկու լուսանկար` 3x4 չափսի, զինվորական դրության վերաբերյալ փաստաթուղթ (կցագրման վկայական կամ զին. գրքույկ):*

Դիմումներն ընդունվում են մինչեւ օգոստոսի 16ը` երկուշաբթիից շաբաթ, ժամը 9:00-ից 17:00-ն, շաբաթ օրը` մինչեւ 14:00-ն:

**Հասցեն` Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեւորգյան հոգեւոր ճեմարան, հեռախոս` 010 517 180, էլ. հասցե` gevorgianseminary@gmail.com, ֆեյսբուքյան էջ: https://www.facebook.com/gevorgianseminary/:**

მაგთი
MAGTI



ՈՂՋ ԱՄԱՌ ԱՊՐԻՐ ՄԱԳԹԻԻ ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

**Օպտիկական համացանցի կրկնապատկված արագություն**

Նվերի ակտիվացման համար զանգահարեք **0800100202** հեռախոսահամարով և առանց լրացուցիչ մուծման ստացեք օպտիկական-մանրաթելային համացանցի կրկնապատկված արագություն

*Մագթիի նվերը*

Առավելագույն կրկնապատկված արագությունը 100մբ/վրկ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❊ ԱՅԼԱԶԱՆ ❊ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉՈ՞Վ Է ՕԳՏԱԿԱՐ ՍՈՒՐՃԸ



***Հեռուստատեսությամբ եւ լրագրերում հաճախ կարելի է հանդիպել նյութերի, որոնք պատմում են սուրճի ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական հատկությունների մասին: Դատելով դրանցից, դժվար է պարզել, վերջին հաշվով, սուրճն օգտակա՞ր է, թե՞ ոչ: Գուցե դուք կոնկրետ օրինակներով հստակություն մտցնե՞ք այդ հարցում:***

***Գ.Մուրադյան***

***Նինոծմինդա***

Շատերն իրենց կյանքը չեն պատկերացնում առանց սուրճի: Սուրճի հատիկներում ավելի քան 2000 ակտիվ նյութեր կան, այդ թվում՝ պոլիֆենոլներ, որոնք հիանալի հակաօքսիդիչներ են եւ ունեն հակաբորբոքիչ, ինչպես նաեւ քաղցկեղածին բջիջները ոչնչացնող հատկություն: Սուրճի հակաօքսիդիչ հատկություններն անմիջականորեն կապված են հատիկների խարկման աստիճանից: Կոֆեինը օրգանիզմից դուրս է մղում թունավոր նյութերը:

Սուրճը նաեւ նպաստում է ուլտրամանուշակագույն ճառագայթներից մաշկը պաշտպանելուն: Ընդհանուր առմամբ, այս ըմպելիքը բարերար ազդեցություն է թողնում օրգանիզմի վրա, նպաստում է ավելորդ կիլոգրամներից ազատվելուն, ամրացնում է անոթների պատերը, բարելավում է լյարդի վիճակը եւ նույնիսկ նվազեցնում է շաքարային դիաբետով հիվանդանալու հավանականությունը:

Սակայն ամեն ինչ չափի մեջ է օգտակար: Իսկ օրինակ, հղիության ընթացքում սուրճի չափաքանակը պետք է կտրուկ նվազեցնել, հատկապես՝ առաջին երեք ամիսներին: Վերջին ամիսներին կարելի է վայելել սիրելի ըմպելիքը, բայց չափավոր քանակով:

ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## ԾԵՐԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌԸ



***Լսել եմ, որ օրգանիզմի ծերացումը պայմանավորված է մի շարք գործոններով: Հնարավո՞ր է, արդյոք, առավել մանրամասն տեղեկանալ այդ գործոնների մասին:***

***Վ.Գաբրիելյան***

***Դեդոփլիսծղարո***

ԱՄՆ-ի Ալբերտ Էյնշտեյնի անվան բժշկական քոլեջի գիտնականները պարզել են, որ մարմնի բջիջների մուտացիաների թիվը տարիքի հետ մեծանում է: Հետազոտողները կարծում են, որ այդ գործընթացը հանգուցային է ծերացման եւ քաղցկեղի զարգացման հարցում:

Այդ մասին հաղորդվում է MedicalXpress-ի մամուլի տեղեկագրում: Կենսաբանները հաջորդակարգել են (որոշել են՝ նուկլեոտիդային հաջորդականությունը) մինչեւ 100 տարեկան մարդկանց լիմֆոցիտների B-համագենը: Պարզվել է, որ նորածինների մոտ մուտացիաների միջին թիվը հասնում է 463,4-ի, 27-30 տարեկան մարդկանց մոտ կա 1181,9 մուտացիա, իսկ նրանց մոտ, որոնք 52-75 տարեկան են՝ 2101,7 մուտացիա: Երկարակյացների մոտ (97-106 տարեկան) դիտվել է 3127 մուտացիա:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԿՈՐԱԾ ԿԱՏՈՒՆ ԳՏՆՈՒՄ ՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ



Կատուներն առեղծվածային էակներ են: Պատմության ընթացքում մարդուն մշտապես ուղեկցող այս կենդանիների հետ կապված գիտությունը դեռեւս շատ բացահայտումներ ունի անելու: Ասում են՝ այս զարմանահրաշ արարածները միակն են, որ տեսնում են զուգահեռ աշխարհը: Այդ խոսակցությունները, իհարկե, ընդամենը հիպոթեզներ են, բայց կա մի բան, որ հաստատ է: Կատուների հետ անցկացրած բազմաթիվ փորձերը ցույց են տվել, որ նրանք միշտ գտնում են տան ճանապարհը: Պարզվել է՝ պատճառն այն է, որ այս կենդանիները շատ զգայուն են Երկրի մագնիսական դաշտի նկատմամբ: Հենց այդ առանձնահատկությունն է օգնում նրանց գտնել տան ճանապարհը: Այդ հիպոթեզը ստուգելու համար գիտնականները կատվի մարմնին ուժեղ մագնիս են ամրացրել: Եվ արդյունքում՝ կենդանին լիովին կորցրել է ճիշտ ուղին գտնելու իր բացառիկ ունակությունը:

ԴԻԵՏՈԼՈԳԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

## ԻՆՉՊԵ՞Ս ՃԻՇՏ ՍՆՎԵԼ ԱՄՌԱՆԸ

*Չնայած նրա, որ մրգերն ու բանջարեղենը մեզ հասանելի են ողջ տարվա ընթացքում, այնուամենայնիվ, ամռանը դրանք իրենց մեջ պարունակում են արեւի ամբողջ ջերմությունը, բնական համը եւ օգտակար հատկություններն ավելի ուժեղ են ազդում օրգանիզմի վրա, քան ձմռանն օգտագործած մրգերն ու բանջարեղենը:*

*Որպեսզի խուսափեք բանջարեղենային կամ մրգային թունավորումից՝ անհրաժեշտ է դրանք լավ լվանալ եւ նոր միայն ճաշակել: Շատ հաճախ հենց ամռանն են նկատվում սննդային թունավորումներ, իսկ այդ ամենից խուսափելու համար, պետք է հետեւել ամռան համար նախատեսված հատուկ սննդակարգին, որը կներկայացվի ստորեւ:*

**Սննդի զանազանություն**

Պետք չէ ծայրահեղության հասնել եւ «ամառային սննդակարգ» ասելով հասկանալ միայն միրգ եւ բանջարեղեն: Ամառային ճիշտ սննդակարգը պետք է լինի զանազան, հավասարակշռված եւ իր մեջ ներառի նաեւ՝

❑ Կաթնաթթվային մթերքներ (մեծահասակներին խորհուրդ է տրվում՝ հրաժարվել կաթնային մթերքներից):

❑ Սպիտակուցային մթերք (միս, ձուկ, ձու, լոբազգիներ)

❑ Շիլաներ (մյուսլի, հացահատիկային շիլաներ) եւ սահմանված չափով ճարպեր:

Չպետք է մոռանաք, որ սնունդը, քաղցը հագեցնելուց բացի, պետք է նաեւ ապահովի մեզ դրական էմոցիաներով: Հենվելով հետեւյալ երեք բնութագրիչների վրա՝ «կարեւոր», «օգտակար» եւ «համեղ», կազմվել է ամառային ճիշտ սննդակարգը.

**ՇԻԼԱՆԵՐ**



Շիլաների մեջ պարունակվում են օգտակար ածխաջրեր, ամինաթթուներ, վիտամիններ, սպիտակուց, մանրաթել. վերջինս մաքրում է ամբողջ օրգանիզմը, մասնավորապես՝ աղիները՝ օրգանիզմից հեռացնելով կուտակված շլակներն ու տոքսինները: Եթե ժամանակին օրգանիզմը չմաքրեք տոքսիններից եւ շլակներից, ապա զանազան հիվանդություններ ի հայտ կգան:

Օգտագործեք մյուսլի, վարսակի փաթիլներ եւ խոշոր աղացած հաց: Սպիտակ հացը եւ խմորեղենը խորհուրդ չի տրվում օգտագործել, քանի որ դրանք ոչ մի օգուտ չեն բերում օրգանիզմին, եւ միայն ավելացնում են կալորիաները:

**ԲԱՆՋԱՐԵՂԵՆ**



Բանջարեղենը կարելի է օգտագործել հում, խաշած, շոգեխաշած եւ խորոված վիճակում: Սակայն պետք չէ չարաշահել բանջարեղենի թերմիկ վերամշակումը, քանի որ նման դեպքում անհետանում է վիտամինների մեծ մասը: Բանջարեղենային աղցաններ պատրաստելիս խորհուրդ չի տրվում օգտագործել մայոնեզ, քանի որ այն վերացնում է բանջարեղենի օգտակար հատկությունները, փոխարենը կարող եք օգտագործել կիտրոնի հյութ՝ մեկ կաթիլ ձիթայուղով:

**ՄՐԳԵՐ**



Ամռանը ցանկալի է օգտագործել սեզոնային մրգեր եւ ցանկալի է, որ դրանք լինեն հենց ձեր տարածաշրջանից: Ընդ որում՝ լավ է, որ ամռանը համտեսեք հենց այդ ամսվան բնորոշ մրգերը՝ հունիսին խնձոր, ծիրան, բալ, ելակ, գիլաս, հուլիսին՝ ազնվամորի, կարմիր եւ սեւ հաղարջ, փշահաղարջ, օգոստոսին՝ սեխ, դեղձ, ձմերուկ: Թվարկված մրգերը, առանց բացառության, պարունակում են բազմաթիվ վիտամիններ, հատկապես վիտամին C, որի հիմնական նպատակն է օրգանիզմը պատրաստել ձմռանը՝ ամրապնդելով դիմադրողականությունը: Խորհուրդ է տրվում միրգն ուտել օրվա առաջին կեսին, քանի որ դրանք ավելի դյուրին են մարսվում:

**ԿԱԹՆԱԹԹՎԱՅԻՆ ՄԹԵՐՔՆԵՐ**



Մածունը, յոգուրտը, թթված կաթը ամռան տապին ոչ միայն զովացնում են ու հագեցնում քաղցը, այլեւ՝ օրգանիզմը ապահովում են օգտակար միկրոտարրերով: Նրանք նաեւ հիանալի մաքրում են աղիները: Հարկավոր է գնել քիչ յուղայնության կաթնաթթվային մթերքներ: Ամռան ամիսներին խուսափեք կաթնային մթերքներից եւ մի օգտագործեք դրանք մրգերի կամ բանջարեղենի հետ:

**ՄԻՍ**



Սպիտակուցը օրգանիզմի համար կառուցողական նյութ է համարվում, եւ այն անհրաժեշտ է մեզ տարվա ընթացքում: Միսը բարձր կալորիականությամբ մթերք է, եւ որպեսզի այն մարսվի օրգանիզմի կողմից, պահանջվում է շատ էներգիա: Ամռանը խորհուրդ է տրվում քչացնել մսի օգտագործումը: Շաբաթական մսամթերքի երկու անգամվա օգտագործումը միանգամայն բավարար է:

**ՁՈՒԿ**



Ձկան սպիտակուցը ավելի դյուրին է մարսվում օրգանիզմի կողմից, քան մսի սպիտակուցը: Ուստի՝ մասամբ հրաժարվելով մսից, կարելի է այն փոխարինել ձկով եւ ծովամթերքով, մանավանդ, որ դրանք հիանալի կերպով համատեղելի են բանջարեղենի հետ: Ամռանը հրաժարվեք հում ձկից՝ սուշիից կամ ծովատառեխից (селедки), քանի որ թունավորման հավանականությունը մեծանում է:

**ԴԵՍԵՐՏ**



Տորթեր, խմորեղեններ եւ այլ կալորիական, ծանր քաղցրավենիքները դժվարամարս են, եւ ցանկալի է դրանք բացառել ամռան սննդակարգից: Հայտնի է, որ ամռան ամիսներին դրանք կարող են օրգանիզմի թունավորման առիթ հանդիսանալ: Հիանալի տարբերակ է դրանք փոխարինել մրգային դեսերտներով՝ ժելեներ, մուսեր: Իսկ վանիլային պաղպաղակը խորհուրդ է տրվում փոխարինել մրգայինով, քանի որ վերջինս ավելի օգտակար է եւ դյուրին է մարսվում:

**ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՀԵՂՈՒԿՆԵՐ**



Ամռանը մեր օրգանիզմը ջրազրկվում է, ուստի անհրաժեշտ է լրացնել օրգանիզմի ջրի պաշարները: Հրաժարվեք սեւ թեյից եւ սուրճից կամ նվազագույնի հասցրեք դրանց օգտագործումը: Ամառային լավագույն 5 ըմպելիքներն են ջուրը, կոմպոտը, թարմ մրգերից պատրաստված կիսելը. կանաչ թեյը՝ կիտրոնով, իմբիրով թեյը, հյութերը, ֆրեշները:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՍԿՍՎԵԼ Է ՄԱՐԳԱՐԱ-ՎԱՆԱՁՈՐ-ՏԱՇԻՐ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ



*Մեկնարկել են Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի նորոգման աշխատանքները:*

Աշխատանքներն իրականացվում են մի հատվածում (Տառերի պուրակի մոտով անցնող ճանապարհահատված)՝ «Լիլիթ-87» ՍՊԸ ընկերության կողմից: Միջին նորոգման աշխատանքների շրջանակներում, կատարվում են փոսերի նորոգում, հարթեցնող շերտի եւ մանրաշերտ ասֆալտբետոնե ծածկի տեղադրում: Աշխատանքների ընթացքին հետեւում է «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի պատասխանատու ներկայացուցիչը:

Անվտանգ երթեւեկություն ապահովելու նպատակով՝ նշված ճանապարհահատվածը կահավորվել է համապատասխան ճանապարհային նշաններով: Պատճառվող անհարմարության համար հայցում ենք վարորդների ներողամտությունը եւ հորդորում ենք պահպանել երթեւեկության կանոնները:

## ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՆՈՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒԵԼՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԳԼԵԴԻՍ ԲԵՐԵՋԻԿԼՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հուլիսի 18-ին մասնավոր այցով Հայաստանում էր գտնվում Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ Գլեդիս Բերեջիկլյանը: Այցի շրջանակներում՝ հյուրը հանդիպումներ ունեցավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի, վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:*





Նախագահական նստավայրում կայացած հանդիպմանը Արմեն Սարգսյանը եւ Գլեդիս Բերեջիկլյանը մտքեր փոխանակեցին Ավստրալիայի ամենամեծ նահանգի՝ Նոր Հարավային Ուելսի եւ Հայաստանի միջեւ համագործակցության զարգացման հեռանկարների շուրջ, խոսել նաեւ ավստրալահայ համայնքի եւ նրա ունեցած դերի մասին: Գլեդիս Բերեջիկլյանը նշեց, որ լինելով Հայոց ցեղասպանությունը վերապրածի թոռնուհի եւ այցելելով Հայաստան՝ հպարտ է իր հայկական ծագմամբ ու արմատներով: Նա հույս է հայտնել, որ յուրաքանչյուր հաջորդ այցին Հայաստանը կտեսնի ավելի զարգացած:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի վարչապետ Գլեդիս Բերեջիկլյանի հանդիպմանը զուգակիցները մտքեր փոխանակեցին Հայաստանի եւ Ավստրալիայի միջեւ համագործակցության զարգացման, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման, Հայաստանի կառավարության առաջնահերթությունների մասին:

Նշենք, որ Գլեդիս Բերեջիկլյանը 2019թ. մարտի 23-ին Նոր Հարավային Ուելս նահանգում տեղի ունեցած ընտրությունների արդյունքում հաղթանակ է տարել՝ դառնալով առաջին կին գործիչը, ով վերընտրվել է նահանգի վարչապետի պաշտոնում:

Նոր Հարավային Ուելսը Ավստրալիայի 8 նահանգներից մեկն է՝ մոտ 8 մլն բնակչությամբ, որից 5 մլն-ից ավելին բնակվում է նահանգի մայրաքաղաք Սիդնեյում: Նահանգն ապահովում է Ավստրալիայի տնտեսության 32,7%-ը, թեեւ բնակչության թվով 5-րդն է: Տնտեսության 20% գյուղատնտեսությունն է, արտահանում է նաեւ քարածուխ, ունի բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն, Սիդնեյում են կենտրոնացած ավստրալական խոշոր ՏՏ ընկերությունների գրասենյակները:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՎԱՏԻԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՊԵՐ

*Հուլիսի 17-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հայաստանում Սուրբ Աթոռի առաքելական նվիրակ, արքեպիսկոպոս Ժոզե Ավելինու Բետանկուրիի հետ:*



Զրուցակիցները մտքեր փոխանակեցին Հայաստան-Վատիկան կապերի հետագա խորացման հեռանկարների շուրջ: Վարչապետը նշեց, որ Հայաստան-Վատիկան սերտ համագործակցությունը հիմնված է քրիստոնեական արժեհամակարգի եւ ընդհանուր պատմական ժառանգություն ունենալու փաստի վրա, եւ որպես առաջին քրիստոնյա երկիր՝ Հայաստանը հատուկ կարեւորություն է տալիս Սուրբ Աթոռի հետ կապերին:

Նիկոլ Փաշինյանը խնդրեց իր ջերմ բարեմաղթանքները փոխանցել Հռոմի պապ Ֆրանցիսկոսին եւ նշեց, որ Հայաստանը եւ հայ ժողովուրդը երախտագիտություն է հայտնում Հռոմի Սրբազան Քահանայապետին եւ Վատիկանին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված պատարագի ժամանակ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ դրանով իսկ միջազգային ճանաչման գործընթացում մեծ ներդրում ունենալու համար: Նիկոլ Փաշինյանն ընդգծել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման կարեւորությունը՝ ցեղասպանությունները եւ ոճրագործությունները կանխելու տեսանկյունից:




## ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՍՏԱՑՈՒՄԸ ՀԱՆԳԵՑՐԵՑ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

*Հայաստանի քննչական կոմիտեի տեղեկատվությամբ, հուլիսի 17-ի երեկոյան մի խումբ անձինք, ապօրինի ծառահատումների դեմ պայքարի խստացման հետ կապված իրենց դժգոհությունները արտահայտելու նպատակով, փակել են Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհի Իջեւան քաղաքի Երեւանյան ու Իջեւանյան փողոցների հատման խաչմերուկի հատվածը:*

Այդ ընթացքում մի խումբ անձինք, խուլիգանական դրդումներով դիտավորությամբ կոպիտ խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով Իջեւան քաղաքի բնակիչների եւ երթեւեկության մասնակիցների նկատմամբ, բղավել, հայհոյել են, վնասել նշված խաչմերուկում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի թիթեղյա ծածկը, գործադրել բռնություն:

Մասնավորապես՝ բողոքի ակցիայի մասնակիցների մի մասը, որպես զենք օգտագործվող առարկաների՝ քարերի եւ մահակների գործադրմամբ, մարմնական վնասվածքներ է պատճառել ոստիկանության մի շարք աշխատակիցներին եւ չենթարկվելով վերը նշված հանցավոր գործողությունները դադարեցնելու նրանց օրինական պահանջին:

Մի խումբ անձանց կողմից որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է թվով 13 անձ, եւս 6 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն՝ չհեռանալու մասին:

Նախաքննությունը շարունակվում է:

### ՍՏԵՂԾՎԵԼ Է ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ԽՈՒՄԲ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ստեղծվել է Աղետների ռիսկերի նվազեցման, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման եւ ըստ մասնագիտական ոլորտների առաջարկությունների ներկայացման նպատակով օպերատիվ աշխատանքային խումբ:*

*Աշխատանքային խումբը կազմակերպելու է աղետների ռիսկերի նվազեցման, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացմանն ուղղված միջոցառումները: Դրանց կատարման ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ Հայաստանի վարչապետին պարբերաբար կներկայացվեն տեղեկություններ եւ ըստ անհրաժեշտության՝ առաջարկություններ:*

### ՇՔԱՆՇԱՆ՝ ՆԻԿԻՏԱ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ



*Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հրամանագիր է ստորագրել՝ անվանի ֆուտբոլիստ, Օլիմպիական խաղերի (1956) չեմպիոն, Մոսկվայի «Սպարտակի» կազմում ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, Խորհրդային Միության հավաքականի եւ Ռուսկե «Արարատի» մարզիչ, ներկայումս ՌԴ ֆուտբոլի ֆեդերացիայի առաջին փոխնախագահ Նիկիտա Սիմոնյանին «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով պարգեւատրելու մասին:*

### ԱՅՍ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է ՀՆԱ-Ի ԱՃՈՎ

*Համաչյայն Eurostat-ի՝ 2019 թվականի առաջին եռամսյակում Հայաստանը Եվրոպայի առաջատարն է ՀՆԱ-ի աճով: Այն կազմել է 7,1 տոկոս:*

*Երկրորդ հորիզոնականում ՀՆԱ-ի 5,2 տոկոս աճով Հունգարիան է, երրորդը՝ 5 տոկոս աճով Ռումինիան: ՀՆԱ-ի 4,7 տոկոս աճով չորրորդ եւ հինգերորդ տեղերը կիսում են Լեհաստանը եւ Վրաստանը:*

### ՉՎԵՐԹԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

*Հայաստանում գործող ավիաընկերությունները հուլիսի 8-ից ավելացրել են իրենց թռիչքները:*

*Թռիչքների թիվն ավելացել է ինչպես դեպի Ռուսաստան, այնպես էլ՝ դեպի Վրաստան ուղղություններով: Հայկական ավիաընկերություններից «Էյր Արմենիա»-ն շաբաթական 14 չվերթ է իրականացնելու Մոսկվայի ուղղությամբ: Ռուսական ավիաընկերություններն ավելացրել են չվերթերը ոչ միայն դեպի Մոսկվա, այլեւ՝ Սանկտ Պետերբուրգ, Եկատերինբուրգ ուղղություններով: Բացվել Երեւան-Բաթումի ուղղությունը:*

### ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

*Սեւանա լճի մակարդակը նախորդ տարվա հուլիսի 15-ի նիշից բարձր է 1 սանտիմետրով՝ չնայած Սեւանա լճից իրականացվող բացթողումների: 2019 թվականի հուլիսի 15-ին Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 81 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա նույն օրում գրանցված 1900 մետր 80 սանտիմետր նիշի դիմաց:*

*Այս տարվա ապրիլից մինչեւ հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 130 միլիոն 602 հազար խորանարդ մետր ջուր: Ոռոգման նպատակներով Սեւանա լճից բաց է թողնվել 42 միլիոն 189 հազար խորանարդ մետր ջուր:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒԼԻՍ



***21.07.2019. Բարեկենդան Վարդավառի պահոց***

Վարդավառի՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին նախորդող շաբաթապահքը Հայ եկեղեցում կոչվում է Վարդավառի պահք:

***27.07.2019. Հիշատակ հին տապանակի եւ նոր Սուրբ Եկեղեցու տոն***

ԱՎԱՆԴԱԿԱՆ

## ՀՈՒԼԻՍԻ 20-21-ԻՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԱԽԱԼՑԻԽԵ, ԿԱՐԾԱԽ, ԳԱՆՁԱ...



«Մշակութային խաչմերուկ» ծրագրի շրջանակներում, հուլիսի 20-ին, ժամը 15:00, Ախալցիխեում, Ռաբաթ ամրոցում կանցկացվի միջոցառում՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին:



Հուլիսի 20-ին Ախալքալաքիի մունիցիպալիտետի Կարծախ գյուղում կանցկացվի աշուղ Ջիվանուն նվիրված ավանդական միջոցառումը:



Հուլիսի 21-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղում կանցկացվի «Տերյանական օրեր» ավանդական տոնակատարությունը:

ՀՅՈՒՐԱԽԱՂ

## ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ «ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ» ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱՄԲՐՈԼԱՈՒՐԻՈՒՄ

*Վրացի նշանավոր արձակագիր Նոդար Դումբաձեի ծննդյան 91-ամյակին էր նվիրված հուլիսի 13-ին, Արեւմտյան Վրաստանի Ամբրոլաուրիի մունիցիպալիտետի Մշակույթի տանը, լեփ-լեցուն դահլիճում, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկակակն թատրոնի ներկայացրած «Մեղադրական եզրակացություն» պիեսը՝ գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի բեմադրությամբ:*



Հատկանշական է, որ այս բեմադրության մեջ, ադամյանցիների հետ միասին, ժամանակին խաղացել էր Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ազգային ակադեմիական թատրոնի Վրաստանի ժողովրդական դերասան, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության եւ Հայաստանի թատերական գործիչների միության ոսկե մեդալակիր Սոսո Լաղիձեն (1936-2018), իսկ Ամբրոլաուրիում «Մեղադրական երակացությունը» ներկայացավ տեղի ժողովրդական թատրոնի դերասանների մասնակցությամբ:

Ներկայացմանը ներկա էին մունիցիպալիտետի քաղաքապետ Ջվիադ Մխեիձեն, սակրեբուլոյի նախագահ Ասլան Սագանելիձեն, պաշտոնական այլ անձինք:

Նշենք, որ նախքան ներկայացման սկիզբը, Ամբրոլաուրիի ժողովրդական, Ճիաթուրայի դրամատիկական, Թբիլիսիի Սանդրո Ախմետելիի անվան պետական, Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական եւ Օզուրգեթիի պետական դրամատիկական թատրոնների միջեւ կնքվեց փոխհամագործակցության հուշագիր:

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***

ՆՈՐՈՒՅԹ

## ՄԵԿ ՏՈՄՍՈՎ՝ ԵՐԵՔ ՏՐԱՆՍՊՈՐՏ. ՓՈԽՎՈՒՄ Է ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

*Թբիլիսիի ավտոբուսի եւ մետրոյի վճարման միասնական համակարգին կմիանան նաեւ միկրոավտոբուսները: Արդյունքում, մայրաքաղաքում մեկ տոմսով հնարավոր կլինի երթեւեկել երեք հասարակական տրանսպորտով: Այս մասին հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:*

Նշենք, որ, այս պահին միասնական համակարգի արդյունքում, Թբիլիսիում ավտոբուսում գնված տոմսով 1,5 ժամվա ընթացքում մետրոն անվճար է եւ՝ հակառակը: Հանրային ողջ տրանսպորտը միասնական համակարգին միացնելու եւ այդպիսով այն մատչելի դարձնելու համար ծրագրից մինչ օրս դուրս էին միայն միկրոավտոբուսները:

ՖՈՒՏԲՈԼ

## ՍԱՉԽԵՐԵԻ «ՉԻԽՈՒՐԱՆ» ԵՎ ԵՐԵՎԱՆԻ «ԱԼԱՇԿԵՐՏԸ»՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

Անցկացվեցին Եվրոպայի լիգայի առաջին ընտրական փուլի հանդիպումները: Վրաստանի գավաթակիր Սաչխերեի «Չիխուրան», երկու հանդիպումների արդյունքում, 4:2 հաշվով պարտության մատնեց Լյուքսեմբուրգի «Փոլային» եւ երկրորդ փուլում իր ուժերը կչափի շոտլանդական «Աբերդինի» եւ ֆիննական «Ռովանեյմի» միջեւ հաղթողի հետ:

Առաջին փուլը հաջողությամբ հաղթահարեց նաեւ Հայաստանի գավաթակիր Երեւանի «Ալաշկերտը»: Այն երկու խաղերի արդյունքով՝ 6:1 հաշվով առավելության հասավ Հյուսիսային Մակեդոնիայի «Մակեդոնիա» թիմի նկատմամբ եւ երկրորդ փուլում կմրցի «Ստյաուա» (Ռումինիա) - «Միլսամի» (Մոլդովա) զույգի հաղթողի հետ:

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԶԳԵՍՏ

*Վրաստանի պարեկային ոստիկանության աշխատակիցները նոր համազգեստ ունեն: Ինչպես հայտնել են ՆԳՆ-ից, ողջ երկրի տարածքում տեսուչների աշխատանքային համազգեստն այսօրվանից փոխվել է:*



Գերատեսչության տեղեկատվությամբ, ժամանակակից դիզայնի նոր համազգեստը եւ կոշիկները հատուկ պարեկային ոստիկանության համար է ստեղծված, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին եւ պատրաստված է բարձրորակ նյութերից:

Հատկանշական է, որ պարեկային ոստիկանությունում ընթացող բարեփոխումների նոր փուլում տեսուչները կապահովվեն նաեւ ամբողջովին նոր եւ ժամանակակից կողային տեսախցիկներով:



Նինոծմինդայի մունիցիպալիտետի Մեծ Խանչալի գյուղի հասարակությունը խորապես վշտացած է անմոռանալի

***Ռաֆիկ Հնձարի ՉՈՄԱՌՅԱՆԻ***

անժամանակ մահվան կապակցությամբ եւ զորակցում է հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Անդրի, քանդակ: 8.Հայկական ուտեստ: 10.Լույսի, մաքրության աստվածը հայոց դիցարանում: 11.Վայր: 13.Հաստ (հակ.): 14.Արաբ երգչուհի: 16.Ռումբ: 17.Ըմբշամարտ: 18.Լացուկոծ, ողբ: 20.Հունգարացի երգչուհի ... Վոլֆ: 21.Հոտառության օրգան: 22.Իրարանցում, խառնաշփոթ: 26.Անկուշտ: 28.Թեթեւ ուտեստ: 31.Պայտ: 32.Միանձնյա իշխանություն խորհրդանշող գլխանոց: 34.Թունավոր «ակնոցավոր» օձ: 35.Տեմպի միավոր դասական երաժշտության մեջ: 36.Լողածոփ: 38.Ձեռքի փոքր թմբուկ: 41.Մեծ, վիթխարի: 43.Փայտանյութ: 45.Ճակատագիր: 48.Արվեստի ձեւ: 49.Գրքի շապիկ: 52.Արյան շրջանառության կենտրոնական օրգան: 53.Վարս, ծամ: 54.Բրազիլիայի երկրորդ մեծագույն քաղաքը: 55.Հարցական դերանուն: 56.Գործիք՝ փորագրության համար: 57.Սանրվելու հարմարանք: 58.Անվճար: 59.Հայաստանում ամենատարածված ձկնատեսակը: 60.Բռնակ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Դրական հատկություն: 2.Բանաստեղծ ... Փանիկյան: 3.Խարազան, ճիպոտ: 4.Գույնզգույն: 5.Քաղաք-պետություն: 7.Ավանդ, գրավական: 9.Վարձու տնային աշխատող կին: 12.Ջրարջ: 15.Խոշոր լիճ Ռուսաստանում: 19.Շքեղ ամառանոց: 23.Նկարիչ՝ ... Թերլեմեզյան: 24.Թակարդ: 25.Աղետալի դեպք: 27.Շինանյութ: 29.Թատրոնի եւ կինոյի դերասանուհի՝ ... Էլբակյան: 30.Մետրոպյան տառ: 32.Հակառակ, ձախողակ: 33.Իսպանացի գեղանկարիչ՝ Ֆրանցիսկո ...: 37.Չամուսնացած, ամուրի: 39.Խարկած ալյուրով, յուղով ու մեղրով ուտելիք: 40.Իտալական մարզական ավտոմեքենա: 41.Խոշոր կապոց, բեռ: 42.Խաղատուն: 44.Ալ.Շիրվանզադեի ստեղծագործություններից: 46.Եպիսկոպոսական ձեռնափայտ: 47.Քաղաք Գերմանիայում: 50.Սուլխան-Սաբա Օրբելիանու գրական ժանրը: 51.Անասունների սպանդ:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Սրամիտ: 3.Շամիրամ: 8.Ուրուգվայ: 10.Անբան: 13.Սոմա: 14.Քե: 16.Աղասի: 18.Ուրարտու: 19.Վերա: 21.Նոսր: 22.Նաղարա: 24.Յոթ: 27.Սի: 28.Իտալիա: 31.Վրաստան: 33.Անոնս: 35.Պելշ: 36.Քարին: 37.Դիլիպ: 39.Ցո: 40.Ավետ: 41.Նանի: 43.Հալալ: 44.Աշնակ: 45.Դրա: 46.Ամարաս: 50.Ամուր: 51.Դաքա: 53.Արատ: 54.Անա: 57.Նավապետ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Սրունք: 2.Աբուլ: 4.Մանսուրյան: 5.Ակնարկ: 6.Հյուսն: 7.Կակուլի: 9.Վեղար: 11.Բոր: 12.Ամա: 15.Եվա: 16.Արա: 17.Իորի: 20.Եղվարդ: 22.Նովենց: 23.Ագապի: 25.Ոլոք: 26.Թինա: 29.Տաշքենդ: 30.Ասրյան: 32.Նեպալ: 34.Սնդիկ: 38.Լալվար: 41.Նշտար: 42.Նազուկ: 43.Հաագա: 45.Դիլան: 47.Աղան: 48.Սա: 49.Սանա: 52.Թավ: 55.Ապ: 56.Են:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445